ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

SUPREME PATRIARCH
CATHOLICOS
OF ALL ARMENIANS
MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ԴՈՒՍՐՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՉԱՏ ՁԱՒԱԿՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ
ՄԵԾԱԶՆԻՒ ՏԻԿԻՆ ԱՐՓԻՆԵ ՆԱԳԳԱՇԵԱՆ
ՈՐ ՅԵՐՈՒՍԱՂԷՄ, ԻՍՐԱՅԵԼ

Համայն հայութեան Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու ջերմ բարեմաղթանքներն ենք յղում Ձեզ՝ մեր ազգին ու Մայր Եկեղեցուն մատուցած Ձեր բարի և շնորհակալ ծառայութիւնների համար, որոնց մասին գոհունակութեամբ տեղեկացանք Երուսաղէմի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեանից:

Մեծազնիւ Տիկին Նագգաշեան, արդարև բարձր գնահատանքի է արժան ուսուցչական և ազգային-հասարակական գործունէութեան առաւել քան կէս դարեայ Ձեր արդիւնաշատ վաստակը՝ ի խնդիր Սփիւռքի մեր զաւակների հայեցի կրթութեան ու դաստիարակութեան և հայրենական կեանքի զօրացման: Կրթական գործի անխոնջ մշակի և շնորհաշատ մանկավարժի նախանձախնդրութեամբ ու նուիրումով Դուք տասնամեակներ շարունակ Հայոց լեզու և գրականութիւն էք դասաւանդում Ամմանի և Երուսաղէմի ազգային կրթօջախներում՝ հայորդեաց հոգիներում զօրացնելով սէրը մայրենի լեզուի և հաւատարմութիւնը ազգային մեր սրբութեանց ու անանց արժէքների հանդէպ:

Սիրով ընդառաջ Պատրիարք Հօր ազնիւ խնդրանքին և ի գնահատութիւն ազգօգուտ ու եկեղեցանուէր Ձեր երկարամեայ գործունէութեան, շնորհում ենք Ձեզ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳԻՐ

Ի խորոց սրտի աղօթում ենք առ Ամենակալն Աստուած, որ Իր Հայրական օրհնութեան ներքոյ պարգևի Ձեզ քաջառողջ երկար կեանք, գործոց մշտանորոգ յաջողութիւններ՝ և երկնատուր ամենայն բարիք, որպէսզի Դուք շարունակէք Ձեր գնահատելի ծառայութիւնը Հայոց դպրութեանը, եկեղեցուն և հայապահպանութեան նուիրական գործին:

Մեր մաղթանքն է նաև, որ Բարձրեալ Տէրը արգասաւորի հայորդեաց հոգիներում Ձեր սերմանած բարի հունդերը և զօրացնի համայն մեր ժողովրդի հայրենասիրութեան ոգին՝ Իր հանապազ հովանու ներքոյ առաջնորդելով մեծարժան գործերի:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն և յաւէտ օրհնեալ ի Մենք. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան ի 21-ն Ապրիլի
Յամի Տեառն 2001 և ի թուին հայոց ՌՆԾ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 144

digitised by A.R.A.R.@